Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում

Առարկա Б1.Б7. Միկրոէկոնոմիկա

<u>Անոտացիա</u>

Աշխատատարությունը՝ *12 կրեդիտ, 432ակադեմիական ժամ*

Քննություն

Համառոտ նկարագրություն. Դասախոսությունների ընթացքում քննարկվում են հարցեր կապված միկրոէկոնոմիկայի տեսական հիմքերի հետ, իսկ գործնական պարապմունքների շրջանակում լուծվում են մի շարք խնդիրներ, իրականացվում է խաչաձև հարցումներ, միջանկյալ թեստավորում, ինչպես նաև քննական հարցերի նախապատրաստում: Դասապատրաստման ընթացքում ուսանողները հաստատված գրականության միջոցով ընկալում և ամրապնդում են հիմնական հասկացությունները, ինչպես նաև լրացուցիչ գրականության միջոցով բավարարում են իրենց հետաքրքրությունները: Ուսանողները ստանում են լրացուցիչ օգնություն ինքնուրույն նյութը սովորելու համար, ինչպես նաև անցկացվում է լրացուցիչ բացատրական աշխատանք դժվարամատչելի նյութը յուրացնելու համար:

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտական մտածողության հիմքերը, տրամադրել միկրոտնտեսագիտական հասկացությունների և մոդելների բնութագիրը, օգտագործել ստացված գիտելիքները գործնական կյանքում կոնկրետ խնդիրներ լուծելիս: Դասընթացն ուսումնասիրելուց հետո ուսանողների մոտ կձևավորվի նաև միկրոտնտեսագիտական վերլուծություններ կատարելու հմտություններ:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. Միկրոէկոնոմիկա առարկան հանդիսանում է հիմնական մասնագիտական դասընթաց և սերտորեն փոխկապակցված է ուսումնական ծրագրի մյուս առարկաների հետ: